ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 101-Ա

«24» ՄԱՅԻՍ 2023Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 96-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի N 3245-Ա հրամանը՝

Որոշում եմ

1. Հաստատել 2023 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N 03 հրամանով հաստատված հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ հսկողություն իրականացնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

5/24/2023

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2023
թվականի մայիսի 24-ի թիվ 101-Ա որոշման

2023 թվականի երկրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	Համայնքի անվանում	Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը	Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառ	Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
2-րդ եռամսյակ					
1	Եղեգնաձոր	01.06.2023թ.- 14.06.2023թ.	Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների բնագավառ	ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետ՝ աշխատանքային խմբի ղեկավար	Աղվան Հարությունյան
				Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Ցողիկ Բաբայան,
				Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Լյուսյա Պողոսյան

Հարսիկյան Գոհար	Հարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ	Ամբողջական որակավորման դասընթաց
Վարդան Գրիգորյան	ՀՄԴ Վայոց ձորի մարզային ներկայացուցչության հարկային տեսչության բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ	Ամբողջական որակավորման դասընթաց
Գոհար Խաչատրյան	Գլխավոր մասնագետ՝ սոցիալական աշխատանքի գծով մասնագետ և աշխատանքային խմբի անդամ	Ամբողջական որակավորման դասընթաց
Սմբատ Խաչիկյան	Ֆինանսական տեսչության բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ	Ամբողջական որակավորման դասընթաց
Հարսիկ Խաչատրյան	Հարկային ոստիկանության ավագ տեսուչ՝ աշխատանքային խմբի անդամ	Ամբողջական որակավորման դասընթաց

				Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Անահիտ Սարգսյան
				Կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Լուսինե Հարությունյան
				Կրթության, մշակույթի և սպորտի վարչության փորձագետ	Աղասի Հովհաննիսյան
				Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ՝ խմբի անդամ	Լիլիա Կարապետյան
				Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Սամվել Հովսեփյան
				Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Խաչիկ Ասլանյան
				Իրավաբանական բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ	Նարինե Մաղաքյան